ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 20.07.2020թ.
ժամը 11 ³⁰

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության բաժնի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան,

գնահատողներ՝

- ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի ավագ սպա Խ. Երիցյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Զաքոյան,
- ՀՀ ՊՆ 31233 զորամասի տեխնիկ-մեխանիկ, ենթասպա Ծ. Մելքումյան:

Գնումները համակարգող՝

- ՀՀ ՊՆ ԳԿ վարչության 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Բաղրամյան)

1. Տեղեկություններ հայտ/գնային առաջարկ/ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների մասին.

2 **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա.Բաղրամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14»** ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
2	«Այ-Թի Թրեյդինք» ՍՊԸ
3	«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ
4	«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ
5	«Քոմփ.ԷՅԷՄ» ՍՊԸ
6	«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ
7	«Տոպազ-95» ՍՊԸ
8	«Կոմպասս» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

23.07.2020թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց գնահատման աշխատանքները:

2 . «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա.Բաղրամյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:

2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ԷԼՄԱՐԿԵՏ» և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերի որոնցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի.

- Հավելված 1.1-ով ներկայացված 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում հարվերով պահանջված «մոնիտոր՝ անկյունագիծը ոչ պակաս 19 դյույմ»-ի փոխարեն գրված է «մոնիտոր՝ անկյունագիծը ոչ 19 դյույմ», ինչը անհասկանալի է և անհրաժեշտ է հստակեցնել:
- Հավելված 1.1-ով ներկայացված 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում թողնվել է հրավերով սահմանված «Կատարված հղումների հետ միասին հասկանալ կամ համարժեքը բառերը» նախադասությունը, քանի որ պայմանագրում ներառվելու են մասնակիցների կողմից առաջարկված և գնահատող հանձնաժողովի կողմից համարժեք գնահատված տեխնիկական բնութագրերը, ուստի անհրաժեշտ է ներկայացնել հստակ տեխնիկական բնութագիր, առանց նշելու «կամ համարժեք» բառերը:

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի.

- Հավելված 1.1-ով ներկայացված 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում հրավերով պահանջվող (առնվազն 2.2 ԳՀց բազային հաճախականությամբ, տեսաքարտ NV GeForce GT820/2GB կամ համարժեք) տեսաքարտի ծավալի վերաբերյալ տեղեկությունը նշված չէ:
- Հավելված 1.1-ով ներկայացված 8-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում պրոցեսորը ներկայացված է «կամ համարժեք» բառով, քանի որ պայմանագրում ներառվելու են մասնակիցների կողմից առաջարկված և գնահատող հանձնաժողովի կողմից համարժեք գնահատված տեխնիկական բնութագրերը, ուստի անհրաժեշտ է ներկայացնել հստակ տեխնիկական բնութագիր, առանց նշելու «կամ համարժեք» բառերը:

Գնահատող հանձնաժողովը Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

24.07.2020թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց գնահատման աշխատանքները:

Սահմանված ժամկետում մասնակիցների կողմից ներկայացվեցին անհամապատասխանությունների շտկված տարբերակները, որոնք քննարկման արդյունքումընդունվեցին գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա.Բաղրամյան)

3.1 Գնային առաջարկ է ներկայացրել **8** մասնակից.

Հ/Հ	Անվանում	Գումար (դրամ)	Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի			Մրցույթի մասնակիցների			Ծանոթություն
			Գինը ԱԱՀ-ով	Գինը առանց ԱԱՀ-ի	անվանումը	Գինը ԱԱՀ-ով	Գինը առանց ԱԱՀ-ի	անվանումը	
1	համակարգիչ ամբողջը մեկում	3690000	2910600	2425500	«Այ-Թի Թրեյդինք» ՍՊԸ	3690000	3075000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	
						2910600	2425500	«Այ-Թի Թրեյդինք» ՍՊԸ	
						3690000	3075000	«Էլմարկետ» ՍՊԸ	
						3190500	2658750	«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ	
						3141000	2617500	«Քոմփ.ԷՅԷՄ» ՍՊԸ	
						3142200	2618500	«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ	
2	լազերային տպիչներ	500000	416400	347000	«Քոմփ.ԷՅԷՄ» ՍՊԸ	600000	500000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	
						416400	347000	«Քոմփ.ԷՅԷՄ» ՍՊԸ	
3	ցանցային բաժանարար	23000	22800	19000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	22800	19000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	Բանակցություն միակ մասնակից
4	դյուրակիր համակարգիչներ	1140000	1188000	990000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	1188000	990000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	Բանակցություն միակ մասնակից
5	դյուրակիր համակարգիչներ	9000000	8307000	6922500	«Կոմպասս» ՍՊԸ	8820000	7350000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	
						8307000	6922500	«Կոմպասս» ՍՊԸ	
						8970000	7475000	«Էլմարկետ» ՍՊԸ	
6	բաշխիչ ցանցի փոխակերպիչ	800000				3960000	3300000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	Բանակցություն բարձր գին
7	մալուխների բաշխման պահարան	320000				408000	340000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	Բանակցություն բարձր գին
8	ցանցային բաժանարար	1160000				1320000	1100000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	Բանակցություն բարձր գին
						1422000	1185000	«Տոպազ-95» ՍՊԸ	
9	ցանցային բաժանարար	1660000	1065000	887500	«Տոպազ-95» ՍՊԸ	1800000	1500000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	
						1065000	887500	«Տոպազ-95» ՍՊԸ	

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14» ծածկագրով ընթացակարգի 6, 7 և 8-րդ չափաբաժիններին մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են տվյալ չափաբաժինների մասով սահմանված նախահաշվային գումարը, իսկ 3 և 4-րդ չափաբաժինների մասով ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները որոշեց գների նվազեցման նպատակով **31.07.2020թ. ժամը 11:00-ին** ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:

Բանակցությանը հրավիրվել են **«Տոպազ-95» և «Էյչ Գրուպ»- ՍՊԸ-ները :**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

37.07.2020թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց գնահատման աշխատանքները:

Հրավիրված բանակցությանը **«Տոպազ-95» ՍՊԸ-ն չներկայացավ, իսկ «Էյչ Գրուպ»-ՍՊԸ-ն** 4-րդ և 7-րդ չափաբաժինների համար սահմանեց նոր գին համապատասխանաբար 1139400 և 319800 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.) **6 և 8-րդ** չափաբաժինները հայտարարեց չկայացած ոչ շահավետ առաջարկի պատճառով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա.Բաղրամյան)

4.1 **03.08.2020թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված /հաղթող/ մասնակիցներ հայտարարել՝ 1-ին չափաբաժնում **«Այ-Թի Թրեյդինք» ՍՊԸ**-ին, 2-րդ չափաբաժնում **«Քոմփ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ին**, 3, 4 և 7-րդ չափաբաժիններում **«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին,** 5-րդ չափաբաժնում **«Կոմպասս» ՍՊԸ-ին,** 9-րդ չափաբաժնում **«Տոպազ-95» ՍՊԸ-ին**:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14»** ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա.Բաղրամյան)

5.1 **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-1/14»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ) Ա. Հովսեփյան

Գնահատող Խ. Երիցյան

Գնահատող Ծ. Մելքումյան

Գնահատող Ռ. Զաղոյան

Գնումները համակարգող՝ Ա. Բաղրամյան